



ԼՐԱՏՈՒ

ՀԱՅ ԱՒԵՏ. ԳՈԼԷՃԻ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 1

24 Դեկտեմբերի, 2010

ՀԱՅ ԱՒԵՏ. ԳՈԼԷՃԸ ԼԱՒԱԳՈՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՃԱԿ ՄՐՑԱՆՔԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ



Հայաստանի Սփիւռքի Նախարարությանը եւ Համաշխարհային Հայկական Գոնկրեսը միասնաբար 1 Փետրուարի, 2010-ին, համահայկական մրցույթի մը՝ «Հայապահպանության գործում ունեցած նշանակալից աւանդի համար» «Լաւագոյն հայկական կրթօճախ» անուանակարգի մասնակցութեան յայտ դրկած էին դպրոցի տնօրէնութեան: Դպրո-

ցի տնօրէն Դոկտ. Չաւէն Սարգիսեան 15 Փետրուարի, 2010-ին, հանգամանօրէն պատասխանած էր յայտին, անհրաժեշտ տուեալներու հայթայթումով եւ Երեւան դրկած էր լրիւ ծրարը: Սոյն մրցույթին մասնակցած են 62 սփիւռքահայ կրթական հաստատութիւններ, որոնց մէջ 30 մէկօրեայ եւ 31 ամենօրեայ դպրոցներ: 7 Հոկտեմբերի, 2010 թուակիր

Նամակով մը մրցույթի կազմակոմիտէն Պէյրութի Հայ Աւետ. Գոլէճի Տնօրէնութեան տեղեկացուցած է թէ Հայ Աւետ. Գոլէճը, որպէս ամենօրեայ դպրոց, «Հայապահպանութեան գործում ունեցած նշանակալից աւանդի համար համահայկական մրցանակաբաշխութեան «Լաւագոյն հայկական կրթօճախ» անուանակարգում ճանաչուել է մրցանակակիր», գլխաւոր մրցանակակիր դպրոցի կողմէն, 12 այլ դպրոցներու հետ (3 ամենօրեայ եւ 9 միօրեայ), որոնք կը գործեն Սուրիա, Իրաք, Արժանթին, Իրան, Վրաստան, Ռուսիա:

Համահայկական մրցույթի կազմակոմիտէի քարտուղար Սերոբ Անտիկեան անպաշտօն կերպով կը գրէ թէ կազմակոմիտէն «բարձր եւ գնահատելի ձեր դպրոցի գործունէութիւնը, եւ այն իր միաւորներով բաւական բարձր դիրք է գրաւել մրցանակակիրների ցուցակում»:

Հայ Աւետ. Գոլէճը պարգեւատրուած է յատուկ վկայականով եւ 1000 ամերիկեան տոլարի նուէրով: Մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցած է մեծ շուքով Երեւանի մէջ, 18 Հոկտեմբերի, 2010-ին:

Հայ Աւետ. Գոլէճը ներկայացուած է յանձինս Երեւանաբնակ հովիւ Վեր. Համլէթ Կիրեղեանի:

ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ՓԱՅԼՈՒ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

2009-2010-ի տարեկերտին Հ.Ա.Գ.Ի ԺԲ. դասարանի աշակերտները ներկայացան պետական պաթալորիայի (Life Science) քննութեանց եւ 9-րդ դասարանի աշակերտները պետական պրեզիդէնտ քննութեանց:

ԺԲ. դասարանի տասը աշակերտներէն ութն յաջողեցան, Սիրէյ Լէպլեպճեան (շատ լաւ յիշատակութեամբ), Սերովբէ Աւետիքեան (լաւ յիշատակութեամբ), Սթիվ Ազատեան (լաւ յիշատակութեամբ), Հոնրի Լէփեճեան, Լորան Արթինեան, Գեորգ Յովհաննեսեան, Սարգիս Սիւլեան եւ Արիս Պաղտոյեան: Սիրէյ բարձրագոյն նիշը բերած է բոլոր հայկական դպրոցներուն մէջ:

Թ. դասարանի ինն աշակերտներն ալ՝ Էնճի Բիրճեան (լաւ յիշատակութեամբ), Էփի Բիրքճեան (լաւ յիշատակութեամբ), Տիգրան Բիրքճեան (լաւ յիշատակութեամբ), Ժան Չիլիկիւրեան (լաւ յիշատակութեամբ), Սիւր Կոպարեան (լաւ յիշատակութեամբ), Ծէյմա Տեքըրմենճեան, Կասիա Գարակէօզեան, Սերժ Գաթայա եւ Յակոբ Ալեքսանեան յաջողեցան, արձանագրելով հարիւր տոկոսի նուաճում:

ՆՇՂԵՐ ՄԻՍԵԱՆ ԱՐՑԱՆԻ ՄԷՋ

10 Ապրիլի, 2010-ին, Ազգ. Առաջնորդարանին մէջ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կրթութեան նախարար Վլատիկ Խաչատրեան, Լիբանանի հայ վարժարաններու տնօրէններուն հետ խորհրդակցական հանդիպում մը ունեցաւ եւ հոն յայտնեց թէ կը ծրագրէ իւրաքանչիւր հայ երկրորդական վարժարանէ հայ աշակերտ մը Արցախ հրաւիրել ամառնային ճամբարի: Հայ Աւետ. Գոլէճէն, Արցախ ֆոնտի ալ գործակցութեամբ, Արցախ մեկնեցաւ ԺՎ. դասարանէն Նժդէհ Միսեան, տասը այլ դպրոցներէ աշակերտներու հետ:



(Շար. 2՝ էջ 2)

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

- Սբ. Գիրքի Ակումբի անդամները առաջնորդութեամբ հոգեւոր տեսուչ Տիկ. Կարինէ Զոլագեանի եւ ընկերակ-



ցութեամբ Տիկ. Զոնա Եունիսէսի ԶԶԱԿ-ի մէջ հաճելի պահեր անցուցին 25 Հոկտեմբերի, 2010-ին: Օրուան յատուկ պատգամաբերն էր Տիկ. Վերա Սվաճեան, որ խօսեցաւ կեանքը իմաստաւորելու յստակ նպատակ ունենալու մասին:

- Մանկապարտեզէն Նախակրթարան Գ.-ի աշակերտները 28 Հոկտեմ-



բերին, իսկ Նախակրթարան Դ-2-ի աշակերտները 5 Նոյեմբերին Աժալթունի Dino City ցուցավայր պարտեզները այցելեցին, ուր օգտաշատ տեղեկութիւններ քաղեցին, ապա եւ ունեցան հաւաքական նախաճաշ:

- Մանկապարտեզի աշակերտները մանկապարտիզականուիին առաջնորդութեամբ 10 Նոյեմբերին Animal City այցելեցին:

- 10 Նոյեմբերին, Նախ. Ա-2. դասարանները Անթիլիասի Կաթողիկոսարանի Հայ Գիրքի ցուցահանդէս-վաճառքին այցելեցին իրենց հայրէնի ուսուցիչներու ընկերակցութեամբ, իսկ Մանկապարտեզը 18 Նոյեմբերին:

- Պատմութեան Ակումբը Պրն. Տնօրէնին առաջնորդութեամբ 20 Նոյեմբե-



րին պտոյտ մը ունեցաւ, այցելելով Բասր Մուսա եւ Պէթետտիկի պալատը:

- Լիբանանի անկախութեան տօնին առիթով Երկրորդական բաժինի



աշակերտութիւնը առաջնորդութեամբ Պրն. Տնօրէնին եւ դաստիարակ ուսուցիչներուն, 23 Նոյեմբերին այցելեց Սերայի կառավարական պալատը, նախապէս առնուած յատուկ արտօնութեամբ:

Ճարտնակութեամբ Ա. Էջէն

Անոնք Երեւանէն Արցախ ճամբորդած են, ճանապարհին այցելելով հոր Վիրապ, Պարոյր Սեւակի տուն թանգարան եւ Նորավանք: Ստեփանակերտի մէջ նախարար Խաչատուրեան գիրենք դիմաւորած է, պանդոկի մը մէջ գիշերելէ ետք, աշակերտները յաջորդ օր մեկնած են բանակավայր: Այցելած են Արցախի տեսարժան վայրերէն Գանձասար, Տիգրանակերտ, Շուշի, Ամարաս, Սիկոյ թումանի տուն թանգարանը: Առօրեայ հանդիպումներ ունեցած են տարեկից արցախցիներու հետ: Ռազմական նախնական գիտելիքներ ստացած են: Ճամբարի աւարտին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան ընդունած է գիրենք:

ԼՈՒՐԵՐ Հ.Ա.Գ.-Ի ՈՒՍՈՒՑՉԱԿԱԶՄԵՆ

- Տիար Արմէն Իւրնէշլեան, Կերթ. Բարձր. Վարժարանի ուսուցչուհի - Տիկ. Անի Տազետեանի հետ, Լիբանանի Հայ Աւետ. Կրթական Խորհուրդը ներկայացուց Ծաղկածորի մէջ կայացած Համահայկական Կրթական Դ. Համագումարին, եւ անկէ առաջ անձնական հրաւերով մասնակցեցաւ Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած արեւմտահայերէնի նուիրուած համաժողովին:

- Արաբերէնի մնայուն ուսուցչուհի Տիկ. Մարիա Ռահպանի եւ ամուսինը, 12 Սեպտեմբերի, 2010-ին, բախտաւորուեցան դուստրով մը՝ Միւլին:

- Նախակրթարանի անգլերէնի մնայուն ուսուցչուհի Օրդ. Նայիրի Սանթրոբեան, 15 Օգոստոսի, 2010-ին, նշանուած է Տիար Թոնի Նոհրայի հետ, Պէյրութ:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ Հ.Ա.Գ.-ԵՆ

- 21 Օգոստոսի, 2010-ին, A.U.B.-ի Եւեմալի Հոլին մէջ տեղի ունեցաւ Youth For Excellence Academy-ի նուագ, պար, նուագախումբ տաղանդներու



ձեռնարկը: Հ.Ա.Գ.-Են Մեղրի Պաղտոյեան, Կրէյս Մա'ամարպաշի եւ Լոռի Եունիսէս տարբեր խումբերու մէջ ջութակով մասնակցեցան, իսկ Զրիսթին Մա'ամարպաշի Պրոտուէյ երաժշտական թատրոնի ծիրէն ներս:

- 2010-2011-ին, Հ.Ա.Գ. իր դմները վերաբացաւ 30 Սեպտեմբերին, 117

աշակերտներով:

- Վերամուտի պաշտամունքը տեղի ունեցաւ Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին մէջ, Կիրակի, 17 Հոկտեմբերին, պատգամաբերն էր Դոկտ. Երուանդ Բատունի: Պրն. Տնօրէնն ալ ուղերձ մը կարդաց:

- Մեղրի Պաղտոյեան (Թ.), Շուշան Զէշիշեան (Ը) եւ Անի Գասապեան (Ե.) մասնակցեցան Մերոպեան Վարժարանի կազմակերպած միօրեայ սեմինարին, որուն նշանաբանն էր «Միասնաբար տեր կանգնինք մեր պապեանական ժառանգութիւններուն եւ ազգային ու հոգեւոր արժէքներուն»: Օրուան պատգամաբերներէն էր Պրն. Ա. Իւրնէշլեան:

- Թարգմանաւարտ Տնօրէնը Հ.Ա.Գ.Են ներս: Երկրորդական բաժնի պատգամաբերն էր վաստակաւոր մատենագետ եւ կրթական մշակ Տիար Ժիրայր Դանիէլեան:

ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԷ

- 1968-ի շրջանաւարտ, ականաւոր տնտեսագետ Դոկտ. Վահան Չաւոյեան, 2010-ին, լոյս ընծայած է «Վերադարձ» խորագրեալ իր բանաստեղծութիւններու գեղատիպ եւ իւրայատուկ գիրքը, Երեւանի մէջ, Էտիթ Պրինտ



հրատարակչատան միջոցով:

- Զ.Ա.Գ.-ի նախկին աշակերտ, Զ.Բ.Ը.Մ.-ի Կեդր. Վարչութեան անդամ Տիար Սինան Սինանեան, 12 Սեպտեմբերի, 2010-ին, Իւնիվերսըլ Զիլթոն պանդոկին մէջ տեղի ունեցած պաշտօնական ճաշկերոյթի ընթացքին Ամենայն Զայոց Կաթողիկոս Գարեգին Բ.Էն ստացած է Ս. Ներսէս Շնորհալի շքանշանը:

- ԱՄՆ-ի Արեւմտեան Ափի Զ.Յ.Դ. պաշտօնաթերթ «Ասպարէզ»ի տարեկան ճաշկերոյթին, 3 Դոկտեմբերի, 2010-ին, Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան անձամբ կարդաց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին կոնդակը եւ չորս այլ հայուհիներու կարգին Մեսրոպ Մաշտոց շքանշանով պարգեւատրեց 1955-ի շրջանաւարտուի Տիկ. Անահիտ Թութիկեան-Մէյմարեանը, որ երկարամեայ դաստիարակ ուսուցիչ եղած է եւ գնահատանքի արժանի գործունեութիւն ունեցած:

- Փաստատեանայի Զ.Կ.Բ.Մ.-ի սրահին մէջ, Արմէն Ղարիպի «Յուշերու Բագին» հատորի շնորհահանդեսին բացումը կատարեց 1971-ի շրջանաւարտ Նոր Սերունդ Մշակութային Միութեան Վարչութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան:

- Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս, Գանատա իր այցելութեան, միատեղ ընդունած է տեղւոյն հայ ազգային երեք կուսակցութիւններու ներկայացուցիչները: Զ.Յ.Դ.-ի ներկայացուցիչներէն մին էր 1974-ի շրջանաւարտ Տիար Նորայր Պերպերեան:

- 1979-ի շրջանաւարտ եւ Զ.Ա.Գ.ի հոգաբարձութեան գանձապահ Տիար Ներսէս Պաղտոյեան, 6 Յուլիսի, 2010-ին, Մերձաւոր Արեւելքի Զայ Աւետ. Եկեղեցիներու Կեդրոնա-

կան Մարմինի անդամ ընտրուած է երեք տարիներու ծառայութեան շնորհիւ մը համար:

- 16 Դոկտեմբերին, Երեւանի մէջ նշուեցաւ Զայաստանի Բժշկագիտական Զամալսարանի 90-ամեակը, որուն ներկայ էին այլազան երկիրներէ եկած բժիշկներ: Կազմակերպուած է նաեւ գիտաժողով, որուն առընթեր 1963-ի շրջանաւարտ Տիկ. Շողակ Վարժապետեան-Յովհաննեսեան մեծ ցուցահանդէս մը կազմակերպած է սփիւռքահայ եւ հայրենի ներկայացուցիչներու մասնակցութեամբ:

- Յուլիս 2010-ին, Լիբանանի Զամազգային Մշակութային եւ Կրթական Ընկերակցութեան Շրջանային Վարչութեան անդամ ընտրուած են 1987-ի շրջանաւարտ Տիկ. Սիլվա Զիրքճեան եւ 1984-ի շրջանաւարտ Փրոֆ. Սեպուհ Այնթապեան:

- 16 Մայիսի, 2010-ին, Լա Զրեւսեթա Զովոտի Զայց. Առաքելական Եկեղեցիի սրահին մէջ դասախօսեց 1971-ի շրջանաւարտ Տիար Վաչէ Պարսումեան: Նիւթն էր՝ «Զայ Զոգեւոր երաժշտութիւնը»: Ձեռնարկը կազմակերպուած էր Եկեղեցիի Դաս-

տիարակչական Յանձնախումբին կողմէ:

- 2006-ի

շրջանաւարտ Կրէկ Լեպլեպճեան Լիբանանեան Ամերիկեան Զամալսարանի Առեւտրական Տնտեսագիտութեան մէջ Պսակաւոր Արուեստից տիտղոսին տիրացած է պատուոյ յիշատակութեամբ:



- Զայկազեան Զամալսարանէն, 2010 Յունիսին, Բ.Ա. վկայական ստացան Յունիսի, 2010-ին, Զ.Ա.Գ.-ի շրջանաւարտներ Շանթ Արաքսեանեան, Տիալա Թերզեան, Սուզանա Մանուկեան, Սօսէ Թաշճեան, Զուրի Մախուլեան, Րաֆֆի Թորամանեան եւ Վարդան Աճեմեան:

- Պէյրութի Ամերիկեան Զամալսարանէն շրջանաւարտ եղան Զ.Ա.Գ.-ի շրջանաւարտներ Շուշան Արթինեան (MS Physiology), Րաֆֆի Իգլատոսեան (BA in Electrical Engineering), Շանթ Իգլատոսեան (BBA in accounting) եւ Վարանդ Զիրքճեան (BBA in Finance):

ՄԱՅ ՊԵՍԻԼԻՈՍ ՊԵՍՈՍԻ (1931-2010)

12 Օգոստոսին, Կլենտէյլի մէջ արկածի մը հետեւանքով մահացաւ Պեսիլիոս Պեսոս, ծնած Զալէպ, 1931-ին: Ծնողը Լիբանան տեղափոխուած է եւ ինք Զայ Աւետ. Գոլէճէն շրջանաւարտ եղած է 1949-ին: Պեսիլիոս Պեսոս Պէյրութի Ամերիկեան Զամալսարանէն շրջանաւարտ է Դեղագործութեան Պսակաւորի տիտղոսով, ունեցած է սեփական դեղարանը Սուք էլ Ղարիպի մէջ, մինչեւ Լիբանանի քաղաքացիական պատերազմը, միաժամանակ դասաւանդելով Ինթերնէյշնըլ Գոլէճի մէջ շուրջ երեք տասնամեակ: Եղած է Պէյրութի Զայ Աւետ. Գոլէճի Շրջ. Միութեան վարչութեան գանձապահ, ապա եղած է դպրոցի հոգաբարձութեան երկարամեայ անդամ, կարեւոր ներդրում բերելով անոր յառաջընթացին մէջ: Շրջան մը եղած է Զայկազեան Զամալսարանի հոգաբարձու: Զ.Ա.Գ.-ի մէջ Բ. Պաքալորիա հաստատուած տարին, 1969-ին, տարի մը սիրայօժար կենսաբանութեան դասաւանդած է: 1989-ի ամրան ռումբերու որոտին տակ Լիբանանէն գաղթած է Լոս Անճելըս, ուր նախ դասաւանդած է, ապա՝ դեղարանի մէջ աշխատած: Ամուսնացած է Զ.Ա.Գ.-էն շրջանաւարտուի Օրդ. Արփիկէ Գոյումճեանի հետ, եւ հայր է երեք զաւակներու՝ Սանտրա, Ալեքս եւ Զիրա:



- 18 Սեպտեմբերի, 2010-ին, իր յիշատակին նուիրուած հանդիսութիւն մը կազմակերպուեցաւ Փասատեանայի մէջ: Խօսողներուն մէջ եղած են Զ.Ա.Գ.-ի շրջանաւարտներ Ենովք Պալիկեան եւ Դոկտ. Վիգէն Կիլվարդեան:

ԲԱՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

- 1996-ի շրջանաւարտուիի Տիկ. Զուրի Գեորգեան-Գասպարեան եւ իր ամուսինը՝ Գրիգոր, 6 Օգոստոսի, 2010-ին, բախտաւորուած են մանչ զաւակով մը՝ Ժիրայր-Գեորգ, Զուսթընի (ԱՄՆ) մէջ:

ՊՍԱԿ

- Նախկին աշակերտուիի Օրդ. Վերա Թովաքեան, 3 Յուլիսի, 2010-ին, պսակուեցաւ Տիար Գրիգոր Զաւանճեանի հետ, Ճիւնիի Սբ. Յարութիւն Եկեղեցիին մէջ:

- Երկարամեայ նախկին աշակերտ (1976-1990) Տոքթ. Պեռնար-Յրաչ Սաղըրեան պսակուեցաւ Տոքթ. Մայա Սարուֆիմի հետ, Յուլիս 2010-ին:

- 1993-ի շրջանաւարտ Տիար Սեւան Արթին, 17 Օգոստոսի, 2010-ին պսակուեցաւ Օրդ. Ալեհուշ Յովհաննէսեանի հետ, Գանձասարի (Լեռնային Ղարաբաղ) Սբ. Աստուածածին եկեղեցիին մէջ:

- 2001-ի շրջանաւարտուիի Օրդ. Նայիրի Բիւրտեան, 25 Յուլիսի, 2010-ին պսակուեցաւ Տիար Վաչէ Սաչլըեանի հետ, Ճիւնիի Սբ. Յարութիւն

եկեղեցիին մէջ:

- Նախկին աշակերտուիի Օրդ. Վերա Զ. Բիւրքեան, 21 Օգոստոսի, 2010-ին պսակուեցաւ Տիար Սետրիք Տիմուլէնի հետ, Մոնթրէալի Կաթողիկէ մայր տաճարին մէջ:

- 1999-ի շրջանաւարտ Արամ Գազանճեան, 2 Զոկտեմբերի, 2010-ին պսակուեցաւ Օրդ. Անի Սեֆերեանի հետ, Սբ. Նշան մայր Եկեղեցիին մէջ:

ՄԱՀ

- 1943-ի շրջանաւարտ ճարտարապետ Պեռնար Զատիտեան (1926-2009) մահացաւ ԱՄՆի մէջ, 19 Դեկտեմբերի, 2009-ին:

- 1946-ի շրջանաւարտ Տոքթ. Ղազար Տարագճեան մահացած է Պարիսկընի (Ռոտ Ալընտ, ԱՄՆ) մէջ:

- Նախկին աշակերտ (1978-1981) Տիար Զրաչ Զաճընեան (1965-2010), մահացած է Պէյրութի մէջ, Սեպտեմբեր, 2010-ին անողոք հիւանդութեան մը իբր հետեւանք:

- 1971-ի շրջանաւարտ Տիար Շահնուր Նորաշխարհեան (1953-2010) մահացած է Տէյթընի (Օհայօ, ԱՄՆ) մէջ, 3 Զոկտեմբերի, 2010-ին:

- 1950-ական թուականներու նախկին աշակերտ Յակոբ Տէյրմէնճեան մահացած է Օգոստոս 2010-ին, Լոս Անճելոսի մէջ:

ԳԵՐԱԶԱՆՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Հայկազեան Համալսարանէն եկած նամակ մը մեզի կը յայտնէ, թէ՛ Զ.Ա.Գ.-ի շրջանաւարտներ Օրդ. Մարիա Փալազեան, Օրդ. Նաթալի Գալայճեան, Պրն. Կարօ Բեօրքիսեան եւ Օրդ. Յուլեր Բէշիշեան, Համալսարանի տեսչական ցանկին վրայ անցած են 2009-2010 տարեշրջանի Բ. կիսամեային, իրենց բարձր միջիններու շնորհիւ:



ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

«Լրատու»ի նախորդ թիւի հրատարակութենէն ասդին շնորհակալութեամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները ի նպաստ դպրոցին.

Բաֆֆի Մանուկեան Կրթանաստի Ֆոնտէն (Լոնտոն) 14.200 տոլար, Զ.Բ.Ը.Ս.-ի «Չաւէն Սըրըլեան Սրցանակ»ը 2500 տոլար, Ֆենիսիայի ճաշկերոյթին Տէր եւ Տիկ. Արմէն Յարութիւնեան 1000 տոլար: Նախկին աշակերտ Տիար Սարգիս Սիմիթեան (Պէյրութ) իր տարեկան յատկացումը 1000 տոլար: Տիկ. Սիրուն Թովճեան (ԱՄՆ) ի յիշատակ իր զաւկին ողբ. Արմէն Թովճեանի 200 տոլար: Տէր եւ Տիկ. Բաֆֆի եւ Սոնիա Բիւրքեան (Պէյրութ) ի յիշատակ ողբ. Կրէժ Բիւրքեանի 100 տոլար, Տէր եւ Տիկ. Պերճ եւ Սոնիա Գալայճեան (Մոնաքօ), ի յիշատակ ողբ. Պեսիլիոս Պետոսի 500 տոլար, շրջանաւարտներ Տէր եւ Տիկ. Ասպետ եւ Նայիրի Պալանեան (ԱՄՆ), Զ.Ա.Գ.-ի Տնօրէնութեան գրասենեակ այցելութեան առթիւ, 100 տոլար, շրջանաւարտ Տիկ. Շուշան Գալայճեան-Սամման (ԱՄՆ) առ ի գնահատանք դպրոցին,

66 տոլար, Տիար Կարօ Ուզունեան (Պէյրութ), առ ի գնահատանք Պրն. Տնօրէնին վերջին գիրքին, «Սիփան»ի եւ «Լրատու»ին 50.000 լ.ո., շրջանաւարտ Տիար Անդրեաս Ճուհուրեան (Ֆրանսա), տնօրէնութեան գրասենեակ այցելութեան առթիւ, 200 տոլար, Տիար Կարպիս Լ. Նազարեան (Պէյրութ) դպրոցի կրթանպաստի ֆոնտին 250 տոլար, Տիկ. Սիրուն Ռշտունի (Պէյրութ) առ ի գնահատանք դպրոցին 200 տոլար եւ շրջանաւարտ Տիկ. Վիվա Էքմէքճի-Յերմէզ (Բուէյթ) 1000 տոլար:

«ԼՐԱՏՈՒ»Ի ՖՈՆՏԻՆ

	Ամ. Տոլար
Շրջանաւարտ Տիար Ծորճ Լոշխաճեան (ԱՄՆ)	366
Շրջանաւարտ Օրդ. Սալբի Բագրատունի (ԱՄՆ)	250
Շրջանաւարտ Տիար Ժաք Ապաճեան (ԱՄՆ)	100
Նախկին աշակերտ Տիար Ներսէ Տերմէնճեան (ԱՄՆ)	100
Շրջանաւարտ Տիար Լեւոն Ղոչախեան (Պէյրութ)	20

Խմբագիր՝ Տնօրէն Չաւէն Ս. Սըրըլեան
 Խորհրդատուներ՝ Տեարք Ներսէ Պաղտոյեան եւ Յակոբ Տեմիրճեան
 Էջաղրում՝ քարտուղարուիի Շողեր Աղպաշեան-Ֆայսալ

Y.M. Philibossian Armenian Evangelical College P.O.Box 3672- Beirut, Tel: 01-349816 - Fax 01-751469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb